



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՍԵՎԱՆԱ ԼԾԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

☒ 375019 ք.Երևան
Մ. Բաղրամյանի պ. 24 դ

☎ 56 92 69
Fax: 22 15 85
E-mail: lilit_g@mail.ru, awd@hjni.am

*N 038
26.12.2011թ.*

**ՀՀ քաղաքաշինության նախարար
պարոն Վ. Վարդանյանին**

Հարգելի պարոն նախարար

ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի «ՀՀ կառավարության 2088թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 788-Ն որոշման 4-րդ կետով հաստատվել է Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման կանխատեսվող հաշվարկային ժամանակացույցը: Հաշվարկային ժամանակացույցի մշակման հիմքում դրվել էին լճի ակտիվ ջրատվության, ջրի ջերմաստիճանի, լիճ թափվող գետերի մակերեսային հոսքի դիտարկումների և ջրաբանական ցուցանիշների ուսումնասիրությունների գոյություն ունեցող արդյունքները:

ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին է դիմել «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ը հայտնելով, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում Սևանա լճի ավազանում հիդրոոդերևութաբանական գիտական հետազոտություններ չեն իրականացվել, այնինչ ներկայումս կուտակվել են մեծ քանակությամբ դիտարկումների տվյալներ: Այդ տվյալների օգտագործումը նորացված մեթոդաբանությունների մշակման համար, հնարավորություն կտա մեծ ճշտությամբ հաշվարկել գոլորշիացման և գետային հոսքերի մեծությունները ներկա պայմանների համար: Միաժամանակ նշելով, որ այդ մեթոդաբանությունները հնարավորություն կտան մեծացնելու ջրային հաշվեկշռի ճշգրտությունը և գնահատելու կլիմայի փոփոխության ազդեցությունը (խոցելիությունը) Սևանա լճի ջրային պաշարների վրա: «Հայպետհիդրոմետը» գտնում է, որ Սևանա լճի ջրային հաշվեկշռի կազման և նրա ակտիվ ջրատվության որոշման ճշգրտությունը մեծապես կախված է գոլորշիացման և մակերևութային ներհոսքի որոշման ճշգրտությունից:

«ՀՀ ԲԱՂԱՔԱՀԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԳՐԻ
 ՀԻՄՆԱՐԿ
 ԲԱՑՏՈՒՂԱԹՐԻԹՅՈՒՆ»
 Մտից № 1/12168-11
 «26» 12 11թ

Հինք ընդունելով տվյալների երկարացված շարքերը և գոլորշիացման հաշվարկման համար օդերևութաբանական պարամետրերի ճշտության և հաշվողական համակարգերի ներդրումը «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ը առաջարկում է մշակել բազմաֆունկցիոնալ ալգորիթմ, որը հնարավորություն կտա տարբեր ժամանակահատվածների համար հաշվարկել գոլորշիացումը, գետային ներհոսքը և ըստ կլիմայական սցենարների գնահատել դրանց փոփոխություններն ապագայում: Սևանա լճի ջրային հաշվեկշռի բաղադրիչների ճշգրտումը հնարավորություն կստեղծի՝

1. ունենալու լճի էապես ճշգրտված ջրային հաշվեկշիռ, ինչպես նաև կազմելու Սևանի մակարդակի հետագա հնարավոր փոփոխության ավելի ստույգ կանխատեսում:

2. Կազմելու լճի ճշգրտված ջրային ռեսուրսների օգտագործման համալիր ծրագիր:

3. Հանրապետության ղեկավար մարմիններին և հասարակական կազմակերպություններին տրամադրել ընթացիկ ջրային հաշվեկշռի ճշգրտված օպերատիվ տեղեկություններ:

Համաձայնվելով «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի առաջարկության հետ, խնդրում եմ Ձեզ դիմել ՀՀ կառավարությանը ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի «ՀՀ կառավարության 2088թ. ղեկտենքերի 18-ի N1563-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 788-Ն որոշման 4-րդ կետով հաստատված հավելվածը:

ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը առաջիկայում կմշակի Սևանա լճի մակարդակի բարձրացման նոր ժամանակացույց, որի հիմքում, բացի ջրաբանական վերջնական ճշգրտված ցուցանիշները, կդրվեն Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության 2001թ. ղեկտենքերի 27-ի ՀՕ-276 օրենքի պահանջը՝ մինչև 2030 թվականը լճի մակարդակը 6 մետրով բարձրացնելու և լճում ջրի բացասական հաշվեկշիռ չթույլատրելու վերաբերյալ:

Առդիր «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի N 06-483 23.12.2011թ. նամակը՝ 3 էջից:

Հարգանքներով



Վ. Մովսիսյան



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՂՐՈՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՐԻՆԳԻ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

Տ Ն Օ Ր Ե Ն

MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA
“ARMENIAN STATE HYDROMETEOROLOGICAL AND
MONITORING SERVICE” SNCO
D I R E C T O R

N 06-483

23.12.2011թ.

ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի
հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ
պարոն Վ.Մովսիսյանին

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ , ԳՈԼՈՐՇԱՑՄԱՆ
ԵՎ ԳԵՏԱՅԻՆ ՆԵՐՀՈՍՔԻ, ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգարժան պարոն նախագահ

ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2012-2016թթ. աշխատանքային ծրագրում ներառված են Սևանա լճի հաշվեկշռի կազմման բարելավման և նրա հիմնական 2 բաղադրիչների՝ գոլորշիացման որոշման մեթոդաբանության և լիճ թափվող գետային հոսքերի ճշգրտման խնդիրները: Այդ խնդիրների նորովի լուծումը կբարելավի մեր կողմից կազմվող Սևանա լճի ջրային հաշվեկշիռները: Ես կցանկանայի նշել, որ այս մեթոդաբանությունների մշակվել են Հայպետհիդրոմետի ստորաբաժանումների կողմից դեռևս 1980-ական թվականներին: Նշեմ, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում Սևանա լճի ավազանում հիդրոոդերևութաբանական գիտական հետազոտություններ չեն իրականացվել, այնինչ ներկայումս կուտակվել են մեծ քանակությամբ դիտարկումների տվյալներ: Այդ տվյալների օգտագործումը նորացված մեթոդաբանությունների մշակման համար, հնարավորություն կտա մեծ ճշտությամբ հաշվարկել գոլորշիացման և գետային հոսքերի մեծությունները ներկա պայմանների համար: Միաժամանակ այդ մեթոդաբանությունները հնարավորություն կտան մեծացնելու ջրային հաշվեկշռի ճշգրտությունը և գնահատելու կլիմայի փոփոխության ազդեցությունը (խոցելիությունը) Սևանա լճի ջրային պաշարների վրա:

Խնդրի դրվածքը և նրա արդի վիճակը. Սևանա լճի գոլորշիացումը և գետային ներհոսքը հանդիսանում են նրա ջրային հաշվեկշռի հիմնական բաղադրիչները:

Բավական է նշել, որ գոլորշիացման որոշման մեջ թույլ տրված 10 % սխալը հանգեցնում է լճի ակտիվ ջրատվության որոշման մոտ 50 % սխալին, իսկ մակերևութային ներհոսքի 10 % սխալը հանգեցնում է 25 % սխալի:

Առաջին անգամ Սևանա լճի և նրա ավազանի ջրաօդերևութաբանական ռեժիմի հետազոտություններ կատարել են 1927-1930 թվականներին: Այդ հետազոտությունների

նպատակն էր մասնավորապես կազմել լճի ջրային հաշվեկշիռը նրա բնական մակարդակի համար, ինչպես նաև գնահատել նրա բաղադրիչների փոփոխությունները լճի տարբեր մակարդակների դեպքում:

Երկրորդ խոշոր հետազոտությունները Սևանա լճի ավազանում անցկացվեցին 50-ական թվականների 2-րդ կեսին, որոնց արդյունքում կազմվեցին լճի ջրային և ջերմային հաշվեկշիռները նոր պայմանների համար և գնահատվեց լճի այն մակարդակը, որի դեպքում կարելի կլիներ բավարարել հանրապետության էներգետիկայի և ոռոգման ջրի պահանջները և կանխել կամ նվազագույնի հասցնել էկոլոգիական ու միկրոկլիմայական բացասական հետևանքները, կապված լճի հորիզոնի անկման հետ:

1979 թ.-ից սկսած Սևանա լճում և նրա ավազանում նոր հետազոտություններ անցկացվեցին, որի հիմնական նպատակն էր որոշել Սևանա լճի մակերևույթից գոլորշիացումը պայմանավորող գործոնների ջրամերձ շերտի օդի ջերմաստիճանի, օդի, խոնավության, քամու արագության, ջրի ջերմաստիճանի մեծությունները, որոնց հիման վրա մշակվեց գոլորշիացման հաշվողական բանաձև տվյալ պայմանների, այսինքն բնական մակարդակից մոտ 18 մ ցածր մակարդակի համար:

Սևանի մակարդակի վերջին 30 տարիների տատանումները կբերեն էկոլոգիական, տնտեսական, միկրոկլիմայական և այլ պայմանների անցանկալի փոփոխությունների, որոնց ուսումնասիրությունը և գնահատումը հրատապ խնդիր է հանդիսանում:

Վերջին 30 տարիներին Սևանա լճում և նրա ավազանում հիդրոօդերևութաբանական գիտական ուսումնասիրություններ չեն կատարվել, հաշվեկշռի հիմնական տարրերի ճշգրտման ուղղությամբ, այնինչ այդ ընթացքում կուտակվել են մեծ քանակությամբ դիտարկումների տվյալներ: Այժմ այդ դիտարկումների շարքերի երկարությունը կազմում է ավելի քան 70 տարի: Սևանա լճի ջրային հաշվեկշռի կազման և նրա ակտիվ ջրատվության որոշման ճշգրտությունը մեծապես կախված է գոլորշիացման և մակերևութային ներհոսքի որոշման ճշգրտությունից:

Գոլորշիացման հաշվարկման համար օգտագործվելու է տուրբուլենտ դիֆուզիայի և էմպիրիկո-ստատիստիկ մեթոդները: Առաջին փուլում մեթոդաբանությունները կմշակվեն օդի և ջրի ջերմաստիճանների, խոնավության և քամու արագության կուտակված տվյալների հիման վրա, իսկ բարելավված հիդրոօդերևութաբանական մոնիտորինգի տվյալներով կվերանայվեն այդ մեթոդաբանությունները:

Գետային հոսքերի համար նախատեսվում է մշակել օպտիմալ մոնիտորինգի ուղեցույց՝ գետերի հոսքի չափվող տարրերի միջոցով ամսական և տարեկան ներհոսքի որոշման համար: Առաջարկում են նաև Սևանա լճի ավազանում ընտրել և սարքավորել փորձնական ջրաբանական ավազան և մշակել մեթոդաբանություն նրանից ստացվող տվյալների մշակման և ընդհանրացման համար: Փորձարարական արդյունքները կօգտագործվեն մակերևութային ներհոսքի որոշման ճշտության մեծացման համար:

1998-1999թթ. Հայաստանում կլիմայի փոփոխության երկրորդ ազգային զեկույցի շրջանակներում կատարվել է կլիմայի փոփոխության հետևանքով Սևանա լճի գոլորշիացման և գետային ներհոսքի խոցելիության գնահատման վերաբերյալ աշխատանք, որի համար հիմք է ծառայել նախկինում գործող գոլորշիացման և գետային հոսքերի կանխատեսումների մեթոդաբանությունները:

Հիմք ընդունելով տվյալների երկարացված շարքերը և գոյորշիացման հաշվարկման համար օդերևութաբանական պարամետրերի ճշտության և հաշվողական համակարգերի ներդրումը նպատակահարմար է մշակել բազմաֆունկցիոնալ ալգորիթմ, որը հնարավորություն կտա տարբեր ժամանակահատվածների համար հաշվարկել գոյորշիացումը, գետային ներհոսքը և ըստ կլիմայական սցենարների գնահատել դրանց փոփոխություններն ապագայում:

Սևանա լճի ջրային հաշվեկշռի բաղադրիչների ճշգրտումը հնարավորություն կտա.

1. կազմելու լճի էապես ճշգրտված ջրային հաշվեկշիռ, որի հետևանքով հնարավորություն կստեղծվի կազմելու Սևանի մակարդակի հետագա հնարավոր փոփոխության ավելի ճշգրիտ կանխատեսում:
2. Հանրապետության ղեկավար մարմինները և հասարակական կազմակերպությունները կապահովվեն ընթացիկ ջրային հաշվեկշռի ճշգրտված օպերատիվ տեղեկություններով:
3. Հնարավորություն կստեղծվի կազմելու լճի ճշգրտված ջրային ռեսուրսների օգտագործման ծրագիր:

Հարգանքով



Լ. Վարդանյան